# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Օձուն  համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Օձուն** | Ավագանու հերթական նիստ | 24.02.2021թ. | 11:00 | Օձունի համայնքապետարան, համայնքի ղեկավարի աշխատասենյակ (ՀՀ Լոռու մարզ, գ .Օձուն, 6-րդ փողոց,  շենք 10) |

## ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(*որոշման նախագծի հեղինակ՝ Ն. Տիփանյան*, զեկուցող՝ Ա. Տիտանյան)

2.*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0311-0118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*.

(*որոշման նախագծի հեղինակ՝ Հ. Գալստյան*, զեկուցող՝ Ա. Տիտանյան)

3.*ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

*(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Թարմինյան, զեկուցող՝ Ա. Տիփանյան)*

*4.ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՍԻԿ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*.

*(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Թարմինյան, զեկուցող՝ Ա. Տիփանյան)*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 փետրվարի 2021 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

***Հայասփանի Հանրապեփության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 24-ի երկրորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 24-ի N -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2.*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0311-0118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

3.*ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

4.*ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՍԻԿ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

(հեղինակ՝ Ն.Տիտանյան
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 փետրվարի 2021 թվական, N -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

**Տ. ԱՂՎԱՆՅԱՆ**
**Ա. ԱՊՐԵՍՅԱՆ**
**Ս. ԱՍՐՅԱՆ**
**Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**
**Ա. ԴԱՎԹՅԱՆ**
**Գ. ԹՈՐՈՍՅԱՆ**
**Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ**
**Ա. ՂԱՐԻԲՅԱՆ**
**Ա. ՄՈՍԻՆՅԱՆ**
**Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

(հեղինակ՝ Հ, Գալստյան
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 փետրվարի 2021 թվականի, N -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0311-0118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 18-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-րդ, 56-րդ հոդվածերով,Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 129-րդ, 135-րդ, 163-րդ, 166-րդ, 169-րդ, 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) կազմի մեջ մտնող Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0311-0118 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի հողամասի նկատմամբ վերականգնել համայնքի սեփականության իրավունքը՝ այն ճանաչելով համայնքային սեփականություն:

2.Սույն որոշման առաջին կետով սահմանված հողամասը (այսուհետ՝ հողամաս) չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական

արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1)Հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

3.Հողամասի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անքաժանելի մասը:

4.Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5.Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներումկազմակերպել և իրականացնել հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու հետ կապված աշխատանքները:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

**Տ. ԱՂՎԱՆՅԱՆ**
**Ա. ԱՊՐԵՍՅԱՆ**
**Ս. ԱՍՐՅԱՆ**
**Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**
**Ա. ԴԱՎԹՅԱՆ**
**Գ. ԹՈՐՈՍՅԱՆ**
**Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ**
**Ա. ՂԱՐԻԲՅԱՆ**
**Ա. ՄՈՍԻՆՅԱՆ**
**Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

(հեղինակ՝ Ա.Թարմինյան
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 փետրվարի 2021 թվականի, N -Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության <<Հարկային օրենսգրքի>> 19-րդ հոդվածի, ,,Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

*Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝*

*Սոս Մնացականյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:*

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ
Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

(հեղինակ՝ Ա.Թարմինյան
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**24 փետրվարի 2021 թվական, N -Ա**

***ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՍԻԿ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,, N 822-Ն որոշման.

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

Վարսիկ Աղվանյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝**

**Կողմ ( )** **Դեմ ( )** **Ձեռնպահ ( )**

**Տ. ԱՂՎԱՆՅԱՆ**
**Ա. ԱՊՐԵՍՅԱՆ**
**Ս. ԱՍՐՅԱՆ**
**Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**
**Ա. ԴԱՎԹՅԱՆ**
**Գ.ԹՈՐՈՍՅԱՆ**
**Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆ**
**Ա. ՂԱՐԻԲՅԱՆ**
**Ա. ՄՈՍԻՆՅԱՆ**
**Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ**
**Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
<<24>> փետրվարի 2021 թվականի N 1-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔ

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ. ՕՁՈՒՆ

2021թ.

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

**Օձուն համայնքի բյուջեն 2020 թվականին փաստացի կազմել է 308 միլիոն 435 հազար 181 դրամ, ընդ որում սեփական եկամուտները կազմել են 69 միլիոն 861 հազար 557 դրամ, որից հարկերը և տուրքերը կազմել են *47 միլիոն 948 հազար 997* ՀՀ դրամ:**

1. Սեփական եկամուտների մեջ հողի հարկի տարեկան հաշվարկի պլանային չափը կազմել է ***30*** միլիոն 47 հազար 76 դրամ, փաստացի կատարվել է ***23*** մլն 596 հազար 855, այսինքն՝ 78,5 տոկոսով:

2. Փոխադրամիջոցների համար գույքահարկ նախատեսվել է 22 միլիոն 502 հազար 400 դրամ, փաստացի կատարվել՝ 23 միլիոն 17 հազար 800, կատարողականը՝ 102,3 տոկոս:

3. Հողի վարձակալության վճարները նախատեսվել են 8 միլիոն 500 հազար դրամ, փաստացի ***6*** միլիոն 425 հազար 731 կատարողականը՝ 75,6 տոկոս:

4. Աղբահանության վճարների հավաքագրումը նախատեսված 4 մլն 500 հազար դրամի փոխարեն կազմել է 2մլն 80 հազար 400 դրամ, այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ բարձր է, իսկ ընդհանուր առմամբ կազմում է նախատեսվածի 46,2 տոկոսը, ինչը ենթադրում է, որ մեր աշխատանքները և ձեր պատրաստակամությունը բավարար չեն հավաքագրումները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, թեպետ քիչ չեն բնակչության շրջանում 2018-2020 թ-ի ընթացքում կատարված իրազեկման և բացատրական աշխատանքները:

Նախատեսվում է ընթացիկ տարում աղբահանության վճարի հավաքագրման ցուցանիշը հասցնել 100 տոկոսի:

5.Պաշտոնական դրամաշնորհները նախատեսվել են 224 միլիոն 479 հազար 324 դրամ, փաստացի ստացվել է 238 միլիոն 573 հազար 624 դրամ:

6. Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրված դոտացիան կազմել է 168 միլիոն 394 հազար 1500 դրամ:

7 . Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները` Կառավարության տրամադրած պետական սուբվենցիաները նախատեսվել 55 միլիոն դրամ, փաստացի կազմել է 59 միլիոն 902 հազար 300 դրամ:

Ինչպես տեսնում ենք ունենք սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների անկում, որը ինչ-որ չափով կապված է կորոնավիրուսով պայմանավորված մարդկանց վճարունակության անկման, նաև որոշ դեպքերում բնակիչների անբարեխղճության հետ:

Այսքանը ընդհանրական բյուջեի եկամտային հատվածի մասին, իսկ ծախսային հատվածում ունենք հետևյալ պատկերը.

**Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ**
(01/01/20 - 30/12/20**թ. ժամանակահատվածի համար**)

| | | | Տարեկան ճշտված պլան | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի | | | այդ թվում | Ընդամենը | | այդ թվում | |
| NN | Եկամտատեսակները | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | (ս.11+ս.12) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | % |
| | 2 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝ | 246,066,800 | 83,977,600 | 308,435,181 | 246,532,881 | 90,879,300 | 93,4 |
| | ***1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ այդ թվում՝*** | ***53,769,476*** | ***X*** | ***47,948,997*** | ***47,948,997*** | ***X*** | ***89,2*** |
| | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում՝ | 30,147,076 | X | 23,718,497 | 23,718,497 | X | 78,7 |
| | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 100,000 | X | 119,642 | 119,642 | X | 119,6 |
| | ***Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար*** | ***30,047,076*** | ***X*** | ***23,596,855*** | ***23,596,855*** | ***X*** | ***78,5*** |
| | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝ | 22,502,400 | X | 23,017,800 | 23,017,800 | X | 104,9 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 22,502,400 | X | 23,017,800 | 23,017,800 | X | 102,3 |
| | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում` | 1,120,000 | X | 1,212,700 | 1,212,700 | X | 101,06 |
| | Տեղական տուրքեր այդ թվում` | 1,120,000 | X | 1,212,700 | 1,212,700 | X | 101,06 |
| | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | 100000 | X | 195000 | 195000 | X | 195,0 |
| | բ Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում` ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | 820000 | X | 817700 | 817700 | X | 99 |
| | գ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | 200,000.00 | X | 200,000.00 | 200,000.00 | X | 100.00 |
| | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ այդ թվում` | 169,797,324 | 55000,000 | 238573,624 | 178671,324 | 59902,300 | 106,1 |
| | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված կառավարման այլ մակարդակներից որից` | 168,394,100 | X | 168,394,100 | 168,394,100 | X | 100 |
| | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 0 | X | | | | |
| | բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ այդ թվում` | 0.00 | X | 8,874000 | 8,874000 | X | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)*** | *1400,224* | *X* | *1400,224* | *1400,224* | *X* | *100* |
| | ***2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից այդ թվում՝*** | *X* | *55000,000* | *59902,300* | *X* | *59902,300* | *108* |
| | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝ | 22,500,000 | 28,977,620 | 21,912,560 | 19912,560 | 30,977,000 | 87.34 |
| | ***3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ այդ թվում՝*** | *17,500,000.00* | *X* | *14,505,731* | *14,505,731* | *X* | *97,4* |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | *8500,000* | *X* | *6,425,731* | *6,425,731* | *X* | *75,6* |
| | Այլ գույքի վարձակալություն | *9000,000* | | *8080,000* | *8080,000* | | *89,8* |
| | ***3.5 Վարչական գանձումներ այդ թվում՝*** | *4700,000* | *X* | *4090,867* | *4090,867* | *X* | *87* |
| | ***Տեղական վճարներ,որից աղբահանություն*** | *4500,000* | *X* | *2079,970* | *2079,970* | *X* | *46,2* |

## Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ

**(01/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)**

| | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | | |
| | (ս.10+ս11) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | (ս.13+ս14) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 2 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | **313,713,080** | 246,066,800 | 96,623,900 | **264,734,674** | 239,228,873 | 54,482,801 | **84,4** |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **94,912,600** | 85,012,600 | 9,900,000 | **91,673,485** | **82,366,485** | 9,307,000 | **96,6** |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | **94,112,600** | 84,212,600 | 9,900,000 | **91,135,050** | 81,828,050 | 9,307,000 | **96,8** |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | **94,112,600** | 84,212,600 | 9,900,000 | **91,135,050** | 81,828,050 | 9,307,000 | **96,8** |
| Ընդհանուր բնույթի ծառայություններ | **600,000** | **600,000** | 0.00 | **398,400** | **398,400** | 0.00 | **66,4** |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | **600,000** | **600,000** | 0.00 | **398400** | **398400** | 0.00 | **99** |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/այլ դասերի չպատկանող/ | **200,000** | **200,000** | | **140,035** | **140,035** | | **70** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **4700,000** | 2,100,000 | 2600,000 | **14034,021** | 1,952,500 | 12,081,521 | **298,6** |
| Ճանապարհային տրանսպորտ | **30000000** | 0 | 30000000 | **26,390,378** | 0 | 26,390,378 | **88** |
| Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | **-27000000** | 400000 | -27400000 | **-14056357** | 252500 | -14308,857 | |
| | | | | | | | |
| Աղբահանում | **10000000** | 10000000 | 0 | **9829,970** | **9829,970** | 0 | **98,3** |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | **94,123,900** | 1,.000,000 | 84123,900 | **42294251** | 9,829,970 | 33,094,280 | **44,9** |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660) | **25000000** | 25000000 | 0 | **24623,615** | **24623,615** | 0 | **98,5** |
| Կոմունալ ՀՈԱԿ-ի պահպանում | **25000000** | 25000000 | 0 | **24623,615** | **24623,615** | 0.00 | **98,5** |
| ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | **19000,000** | 19000,000 | 0 | **19,081,177** | 18606240 | 3980040 | **100,4** |
| որից՝ | | | | | | | |
| Գրադարաններ | **5,000,000.00** | 5000000 | 0.00 | **5000000** | 5000000 | 0.00 | **100** |
| Թանգարաններ և ցուցասրահներ | **0.00** | 0.00 | 0.00 | **0.00** | 0.00 | 0.00 | |
| Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | **8,500,000** | 8,500,000 | 0 | **8,500,000** | 8,500,000 | 0 | **100** |
| Այլ մշակութային կազմակերպություններ | **5,400,000** | **5,400,000** | 0 | **4,481,177** | 4,481,177 | | **83** |
| Կրոնական և հասարակական այլ ծառայություններ | **100,000.00** | 100,000.00 | 0.00 | **100,000.00** | 100,000.00 | 0.00 | **100** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | **0.00** | 0.00 | 0.00 | **0.00** | 0.00 | 0.00 | |
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910+տող 2920+տող 2930+տող 2940+տող 2950+տող 2960+տող 2970+տող 2980) | **72076,580** | **72076,580** | 0 | **70158,425** | **70158,425** | 0 | **97,3** |
| որից` | | | | | | | |
| Նախադպրոցական կրթություն | **36 000 000** | **36 000 000** | 0.00 | **35 108 000** | **35 108 000** | 0.00 | **97,5** |
| Հիմնական ընդհանուր կրթություն | **2 676 580** | **2 676 580** | | **2 676 580** | **2 676 580** | | **100** |
| Բարձրագույն մասնագիտական կրթություն | **6000000** | 6000000 | 0.00 | **5801860** | **5801860** | 0.00 | **96,7** |
| Արտադպրոցական դաստիարակություն | **27000000** | **27000000** | 0 | **26311000** | **26311000** | 0 | **97,5** |
| Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | **400 000** | 400 000 | 0.00 | **261185** | **261185** | 0 | **65,3** |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **3,900,000.00** | 3,900,000.00 | 0.00 | **3240000** | 3240000 | 0.00 | **83,1** |
| որից` | | | | | | | |
| Ընտանիքի անդամներ և զավակներ | **900,000.00** | **900,000.00** | 0.00 | **890000** | 890000 | 0.00 | **99** |
| Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | **3,000,000.00** | 3,000,000.00 | 0.00 | **2350000** | **2350000** | 0.00 | **78,3** |

1. Աշխատակազմի պահպանման, հողի հարկի, գույքահարկի բազաների և ՀԿՏՀ կայքերի սպասարկման նպատակով ծախսվել է 91 միլիոն 135 հազար 050 դրամ:

2. Տնտեսական հարաբերություններ բնագավառում ունեցել ենք ծախսեր ասֆալտապատման աշխատանքների վրա 26 միլիոն390հազար378 ՀՀ դրամ: Հակակարկտային կայանների սպասարկման և գազի բալոնների լիցքավորման նպատակով ծախսվել 252 հազար ր500 ՀՀ դրամ:

. Աղբահանության փաստացի ծախսը կազմել է **9միլիոն 829հազար 970դրամ**:

4. Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառում ծախսը կազմել է **19 միլիոն** 081 **հազար 177 դրամ** , որից 16 միլիոն 500 հազար դրամը՝ մշակույթի տների և գրադարանների պահպանման, 3980040 դրամ ծախսվել Մղարթ բնակավայրի համայնքային դահլիճի վերանորոգման աշխատանքների համաֆինանսավորման նպատակով:

5 . Կրթության բնագավառին հատկացվել է **70 միլիոն 158 հազար 425 դրամ**՝ որից մանկապարտեզներին՝ 35 միլիոն 108 հազար դրամ, արվեստի դպրոցի պահպանմանը ՝ 26 միլիոն 311 հազար , դպրոցների դասագրքերի վճարի՝ 2 միլիոն 676 հազար 580դրամ:

6. Սոցիալական պաշտպանությանը տրամադրվել է 3 միլիոն 240 հազար դրամ՝ համայնքի սոցիալապես անապահով խավի, նորածինների, Արցախյան ազատամարտի մասնակիցների ընտանիքներին աջակցելու նպատակով:

Այսքանը համառոտ թվային տվյալներ բյուջեի կատարողականի մասին, այժմ առավել հանգամանալից 2020թ. ընթացքում հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում և ընդհանրապես կատարված աշխատանքների և խնդիրների մասին:

2018-2022թթ Հնգամյա զարգացման ծրագրով 2020թ-ի համար նախատեսված

աշխատանքները համառոտ

1. Մղարթ բնակավայրի խմելու ջրագծի կառուցում- կատարվելու է ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ ՝ՀՀ Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, ընթացքի մեջ են նախագծահետազոտական

աշխատանքները, ծրագրում ներառվել է նաև Արդվի բնակավայրի խմելու ջրագծի կառուցումը:

2. ֆուտբոլի դաշտի կառուցում-իրականացվել է ՀՀ Ֆուտբոլի Ֆեդերացիայի և Օձունի համայնքապետարանի միջոցներով՝ ընդհանուր շուրջ 16,5 միլիոն դրամ, համայնքապետարանը ֆինանսավորելու է ցանկապատի կառուցման գումարը:
3. Օձունի ՆՈՒՀ-ի կազմի մեջ մտնող թիվ 2 մանկապարտեզի տանիքի նորոգում-նախատեսված էր կատարել դոնոր կազմակերպության միջոցով, չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով:
4. Ծաթեր բնակավայրի փողոցների լուսավորության համակարգերի կառուցում-նախատեսված էր կատարել շուրջ 1միլիոն դրամի համայնքապետարանի միջոցներով, կատարվել է շուրջ 19միլիոն դրամի համայնքի բոլոր բնակավայրերում, բացի Կարմիր Աղեկը, տեղադրվել են 210 ԼԵԴ լուսատուներ: Ֆինանսավորվել է պետական սուբվենցիայի և համայնքի ֆինանսական միջոցներով:

5. Հագվի բնակավայրի խաղահրապարակի կառուցում-իրականացվել 2019 թվականին, խաղասարքեր, անվանական նստարաններ և աղբամաններ տեղադրվել են բոլոր բնակավայրերում:

6. Արևածագ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի կառուցում-նախատեսվում էր նորոգել 1կմ երկարությամբ հատված՝ նոր խողովակներով: Աշխատանքները տեղափոխվել են 2021թվական ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

Ծավալային առումով իրականացվել են բազմակի անգամ ավելի աշխատանքներ՝ պայմանավորված պետական սուբվենցիաներով համաֆինասավորումներով:

## 2.Շինարարություն

Օձուն խոշորացված համայնքի 2018-2022 թթ զարգացման ծրագրում ընտրվել է ռազմավարություն համայնքում ենթակառուցվածքների զարգացման ուղղված աշխատանքների ուղղությամբ, ինչն իր հերթին կնպաստի տնտեսության, այդ թվում՝ տուրիզմի զարգացմանը: Սկսած 2018թ-ից Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համայնքներին հնարավորություն է տալիս համաֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրեր իրականացնել: Օգտվելով այդ հնարավորությունից՝ համայնքը 2018-2020թ-ին իրականացրել է նաև հետագա տարիների համար նախատեսված աշխատանքներ: 2020 թ-ին Օձուն համայնքը ներկայացրել է 4 սուբվենցիոն ծրագրեր, որոնց նախնական արժեքը շուրջ 100 մլն դրամ է եղել:

Հնգամյա զարգացման ծրագրով ճանապարհաշինության ոլորտում նախատեսվել էր շուրջ 60մլն դրամի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ իրականացնել 2021-2022 թթ-ի ընթացքում: Սակայն 2018-2020թ-ի ընթացքում արդեն կատարվել են 140 միլիոն դրամ արժողությամբ ասֆալտապատման աշխատանքներ, ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել ևս 65 միլիոն դրամի: Ընդհանուր առմամբ ճանապարհների վերանորոգումն ու ասֆալտապատումը բավականին ծախսատար աշխատանքներ են և միայն համայնքի միջոցներով այսպիսի տեսանելի արդյունքի անհնար էր հասնել: Համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական սուբվենցիաները շատ կարևոր նշանակություն ունեն: Հաշվետու 2020թ –ի ընթացքում Կառավարության կողմից տրամադրվող սուբվենցիայի ծրագրով, ասֆալտապատվել են Օձուն և Այգեհատ բնակավայրերի շուրջ 1 կմ երկարությամբ փողոցներ: Այգեհատ բնակավայրում հիմնանորոգվել և

ասֆալտապատվել է շուրջ 350գծմ երկարությամբ հատված, իսկ Օձունում՝ 650 գծմ: Փողոցների ընտրությունը կատարվել է գնահատելով դրանց վիճակը և ծանրաբեռնվածությունը, նաև մյուս ենթակառուցվածքների առկայությունը՝ լուսավորության համակարգեր, կոյուղագիծ: Երկու փողոցներն էլ ծայրահեղ վատ վիճակում էին գտնվում: Անձրևային օրերին դժվարանում էր անգամ տրանսպորտի շարժը:

Հարթեցման աշխատանքներ իրականացվել են հեռագնա արոտներ տանող ճանապարհներում: Համայնքի գրունտային, դաշտամիջյան և հեռագնա արոտներ տանող ճանապարհները կհարթեցվեն 2021թ-ին և հաջորդող տարիներին՝ պայմանավորված սեփական տեխնիկայի առկայության հետ:

2020 թվականին շարունակվել է նաև համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքները, այդ նպատակով նախատեսվել էր շուրջ 26 միլիոն դրամ, մրցույթի արդյունքում կնքվել է 18 948 000 դրամ ի պայմանագիր, տեղադրվել են 210 ԼԵԴ լուսատուներ համայնքի 8 բնակավայրերում: Այս ծրագրում պետական սուբվենցիայով համաֆինանսավորման չափը կազմել է 60 տոկոս:

Հաշվետու տարում նորոգվել են նաև համայնքային դահլիճներ Օձուն և Մղարթ բնակավայրերում:

Համայնքը մասնակցել է Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացված <<Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում>> ծրագրի շրջանակներում անցակացված դրամաշնորհային մրցույթին և ստացել 6 միլիոն դրամի դրամաշնորհի վկայագիր: Դրամաշնորհը ուղղված էր Օձուն բնակավայրի համայնքային դահլիճի վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացմանը: 2020թ-ի ընթացքում կատարվել են դահլիճի վերանորոգման շինարարական աշխատանքները, այս ծրագիրը ևս ներկայացվել է պետական սուբվենցիայով ֆինանսավորման: Շինարարական

աշխատանքների նախահաշվային արժեքը 10 784 000 դրամ էր, մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի արժեքը ` 8 339 708 դրամ: Դրամաշնորհի գումարից 4 500 000 դրամը ծախսվել է շինարարական աշխատանքների համար, 1500 000 դրամի նախատեսվում է օգտագործել ընթացիկ տարում գույքի ձեքբերման նպատակով:

Մղարթ բնակավայրում վերանորոգվել է համայնքային դահլիճ , որը բնակիչների կողմից օգտագործվում է նաև որպես հանդիսությունների սրահ : Ծրագրի նախահաշվային արժեքը 9 119 915 դրամ է, մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի գինը 5 981 144 դրամ: Ծրագրի արժեքի 40 տոկոսը իրականացվել է պետական սուբվենցիայով, 2 միլիոն դրամ տրամադրել է <<Մուլտի Գրուպ>> կոնցեռնը: 2019թ-ին սրահի համար ձեռք են բերվել գույք և սպասք: Ընթացիկ տարում << Լոռու զարգացման կենտրոն>> ՀԿ-ի , Հայկական Կարիտասի և Օձունի համայնքապետարանի համագործակցության արդյունքում սրահի տանիքին տեղադրվելու են 6ԿՎՏ/ժամ արտադրողականությամբ ֆոտովոլտային պանելներ , այդպիսով կլուծվի նաև ջեռուցման խնդիրը:

## 3. Կոմունալ տնտեսություն

2020թ –ի ընթացքում կատարվել է կանոնավոր աղբահանություն խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում: Աշխատանքները իրականացվել են <<Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից: Չնայած այն հանգամանքին , որ բացի աղբահանությունը, մաքրվել են նաև շատ դժվարամատչելի տարածքներ, փակվել են բազմաթիվ հին աղբավայրեր, բայց դեռևս հաճախակի ենք հանդիպում չնախատեսված վայրերում աղբակույտերի առաջացման խնդրին, ինչը հարիր չէ մեր համայնքին: Սա խնդիր է , որն ազդում է մեր համայնքի հեղինակության և գրավչության վրա : Հարգելի բնակիչներ ցավով արձանագրում եմ նաև ,որ ձորափեշերին հարակից տարածքներից ,

առանձնատներից շարունակվում է աղբի թափումը, որն անընդունելի հատկապես այն պարագայում, երբ համայնքի բոլոր բնակավայրերում կատարվում է կանոնավոր աղբահանություն:
Սկսած 2018թ.-ի հունվարի 1-ից Կառավարության պահանջով և համայնքի ավագանու որոշմամբ աղբահանությունը իրականացվում է մասնակի փոխհատուցմամբ` սահմանվել է վճար ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Այս մշակույթը ևս զարգացնելու կարիք ունի: Յուրաքանչյուր ֆիզիկական անձի համար նախատեսվում է ամսական 100 դրամ աղբահանության ծառայության վճար, ինչի հավաքագրումը շարունակվում է մնալ ցածր կատարողականով:
Կոմունալ և ճանապարհային տնտեսության բնագավառում ամենամեծ ձեռքբերումը ունիվերսալ էքսկավատորի և ավտոգրեյդերի տրամադրումն էր ՀՀ Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, որտեղ համայնքի ներդրումը նախատեսվել էր դրանց արժեքի հինգ տոկոսի չափով: Տեխնիկաների ընդհանուր արժեքը 90 միլիոն դրամ էր: Տեխնիկան համայնքին շատ անհրաժեշտ է թե կոմունալ բնույթի խնդիրներ լուծելու, թե գրունտային ճանապարհների բարեկարգման / հատկապես հեռագնա արոտներ տանող ճանապարհներ, դաշտամիջյան ճանապարհներ/ և ինչու չէ նաև գյուղատնտեսության զարգացման համար: Այստեղ խնդիր ունենք նախկին ոռոգման համակարգերը վերանորոգելու, վերագործարկելու: Հաշվետու տարվա ընթացքում տեխնիկաները վարձակալությամբ տրամադրվել են ճանապարհաշինական կազմակերպություններին, ինչի արդյունքում համայնքի բյուջեն համալրվել է լրացուցիչ 8 միլիոն դրամ ֆինանսական մուտքերով: Ավագանու որոշմամբ համայնքի բնակիչների համար սահմանվել են տեխնիկայից օգտվելու արտոնյալ պայմաններ:

## 4. Գյուղատնտեսություն

2021թ. հունվարի 1-ի դրությամբ Օձուն խոշորացված համայնքում առկա են խոշոր եղջերավոր անասուններ՝ 4858 գլուխ, որից կովեր՝ 2139, արտադրող ցուլեր, խոզեր՝ 1615 գլուխ, ոչխար և այծ՝ 1544 գլուխ, ձի՝ 207, ավանակներ ՝9, թռչուն՝ 13529 թև, մեղվաընտանիք՝ 1033 հատ:

Մշակվել են հացահատիկային կուլտուրաներ՝ այդ թվում ցորեն 998 հա, եգիպտացորեն 103 հա, արևածաղիկ 5,5 հա: Կարտոֆիլի ցանքը կատարվել է 237,6 հա-ի վրա, միջին բերքատվությունը մինչև 18 տոննա: Բանջարաբոստանային կուլտուրաներ մշակվել են 654 հա, հատիկաընդեղեն 107 հա, բազմամյա բույսեր 16 հա, կերային մշակաբույսեր ՝90 հա, ազնվամորի 12,5 հա, ծխախոտ՝ 2 հա:

Կառավարության սուբսիդավորմամբ բնակիչներին տրամադրվել է աշնանացան ցորեն 33 700 կգ՝ 1 կգ –ը 160 դրամով:

2019 թվականին կառուցված ոռոգման ցանցի գործարկման արդյունքում նախատեսում ենք ունենալ բանջարաբոստանային կուլտուրաների ցանքսի աճ: Ավելի արդյունավետ հողագործություն զարգացնելու նպատակով, համայնքը իր միջոցներով և տեխնիկայով վերականգնելու է նաև նախկին ոռոգման համակարգերը:

Գյուղատնտեսության բնագավառն ընդհանրապես համայնքում նորամուծությունների կարիք ունի, նոր մշակաբույսեր, հողի մշակման նոր մոտեցումներ, խելացի անասնագոմեր և այլն: Պետք է արձանագրեմ նաև, որ վերջին տարիներին այս առումով առաջընթաց ենք արել, ավանդական հացահատիկային կուլտուրաներից, կարտոֆիլից բացի հիմնվել են ազնվամորու մի քանի հեկտար ցանքատարածություններ, մշակվում է նաև լոբի,

լոլիկ: Այստեղ էլ գյուղացիները իրացման խնդրի առջև են կանգնել` հատկապես ազնվամորու հարցում:

## 5. Մշակույթի և սպորտի ոլորտ

Պետք է արձանագրել , որ կորոնավիրուսով կապված սահմանափակումները շատ պասսիվացրին մշակութային կյանքը ինչպես ամբողջ երկրում , այնպես էլ մեր համայնքում: Տարվա զգալի մասը չաշխատեցին մշակույթի տները, ընդհատումներով աշխատեց << Օձունի մանկական արվեստի դպրոցը, գրեթե չգործեց կարատեի խմբակը:

Օձունի Մանկական արվեստի դպրոցում սովորում են մոտ 130 աշակերտներ, գործում են երաժշտական տարբեր գործիքների` դաշնամուրի, ջութակի, ժողգործիքների, ժողովրդական երգի և նկարչության դասարաններ: Ուրախությամբ արձանագրում եմ այն փաստը , որ այժմ ունենք վերանորոգված արվեստի դպրոցի մասնաշենք , որն ապահովված է ջեռուցման լոկալ համակարգով և անհրաժեշտ գույքով, գործիքներով:

Օձունի Մշակույթի տանը գործում են թատերական, պարի, կարատեի, ձեռագործ աշխատանքների խմբակներ: Գործող խմբակներն ունեն բավարար պայմաններ, ինչի արդյունքում մենք ամեն տարի արձանագրում ենք տարբեր խմբակներ հաճախող երեխաների թվի աճ:

## 6. Տուրիզմ և արտաքին կապեր

Ամեն տարի համայնքի կողմից աշխատանքներ են տարվում ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ինչը միտված է նաև տուրիզմի և տնտեսության այլ ոլորտներում ներդրումների համար համայնքը գրավիչ դարձնելուն: Համայնքի բնակավայրերի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, պատմամշակութային արժեքների առկայությունը, հյուրանոցի և հյուրատների առկայությունը, ենթակառուցվածքների առկայությունը, ինչու չէ` ներկայիս մասամբ բարեկարգ վիճակը, ստեղծում են բարենպաստ պայմաններ տուրիզմի տարբեր տեսակների զարգացման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում համայնքի մաքրությանն ուղղված միջոցառումներին: Համայնքը համագործակցում է այն բոլոր կառույցների հետ, որոնք աշխատանքներ են կատարում տարբեր բնակավայրերում տուրիզմի զագացման հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ:

Համայնքում հաջողությամբ գործում և զարգանում է հյուրատնային բիզնեսը: Ընդհանրապես զբոսաշրջային բիզնեսը համայնքում զարգացնելու համար ունենք բավարար հնարավորություններ` աշխարհագրական նպաստավոր դիրք, բնակլիմայական մեղմ պայմաններ, պատմամշակութային հուշարձաններ, ասֆալտապատ, լուսավոր փողոցներ : Պետք է նշեմ , որ համայնքի պատմամշակութային արժեքները աշխարհին վերջին տասնամյակում ավելի ճանաչելի են դարձել շնորհիվ մեր հոգևոր հովիվ Տեր Վրթանես Քահանայի: